

ԱՄԲՈՒԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ *)

III

Մինչև այժմ ընթերցողներին ղրագեցրինք ընդհանուր հարցերով, որոնք անհրաժեշտ էին դադարաւոր տալու համար, թէ որպիսի սարսափելի ներքին ոյժ և որպիսի հոգեբանական օրէնքներ ունի ամբոխը:

Ձեռք բերած փաստերի հիման վրայ այժմ պէտք է քննել ոչ միայն այն, թէ ինչպէս է՝ արտայայտուում այդ ներքին ոյժը, այլ և այն, թէ բացի ժառանգական ու հասարակական պայմաններից կամ դործօններից (ֆակտոր)՝ արդեօք կան ուրիշ դործօններ, որոնք առաջ են բերում խմբական յանցանքներ:

Ներկայ ժամանակում նկատելի է զանազան ժողովուրդների մէջ գոյութիւն ունեցող մի ինչ-որ խռովարար ու ապրտամբական ոգի: Բանուորների և չքաւոր գիւղացիների մէջ այստեղ կամ այնտեղ առաջ է եկել հասկացողութիւն, որ իրանցից կազմուում է մի նոր դասակարգ և ներկայ քաղաքական տղատամտութիւնը մեծ նշանակութիւն է տալիս թուական շատութեանը. բնական կերպով և շատ տրամաբանօրէն կարող է պահանջել, որպէսզի միւս դասակարգերը նրան՝ այդ նոր դասակարգին այժմ տան աւելի մեծ իրաւունքներ ու արտօնութիւններ:

Մարդին բոլորովին յատուկ այս հասարակական պահանջը գոյութիւն է ունեցել և ունի ինչպէս պատմական առաջադիմութեան իւրաքանչիւր շրջանում, այնպէս էլ ամենմի անհատի մէջ՝ իբրև հետևանք ինքնապաշտպանութեան: Հէնց այս հասարակ պահանջի մէջ է կայանում այն քիչ թէ շատ չափազանցած մտքերի առաջին և միակ աղբիւրը, որոնք գնալով աւելի և աւելի ընդարձակուում ու տարածուում են:

Շատերը մի որեւէ ժողովրդի անբաւականութիւնն ու անհանգստութիւնը վերադրում են այդ մտքերին. ասում են, որ

*) Տես «Մուրճ», № 10.

այդ մտքերը արմատական պահանջներից տանում են դէպի անիրշխանութիւն. նրանց կարծիքով՝ եթէ չլինէին այն տեսակ մարդիկ, որոնք իրանց և ուրիշներին չղարծնէին այդ գաղափարների առաքեալներ, այն ժամանակ զիւղացիները և քաղաքի բանուոր դասակարգը մինչև հիմա էլ կը լինէին հանգիստ և իրանց վիճակից գոհ, երբէք չէին երազիլ դրանից լաւ դրութեան մասին:

Ձի կարելի ուրախալ, որ այդ մտքերը աւելի ոյժ են տուել նրանց ցանկութիւններին. շատ ճիշտ է ասում Տենը, ոչինչ այնքան վտանգաւոր չէ, որքան վտանգաւոր է մեծ գաղափարը փոքր գլխի մէջ: Հասկանալի է, որ հասարակական ձգտումների բարդութիւնը կարող է վատ ազդեցութիւն ունենալ շատերի բարոյական ու մտաւոր հաւասարակշռութեան վրայ. այս տեսակները ունենալով շատ մեծ կարիք, բայց շատ քիչ կամ ոչ մի գիտութիւն, ստիպուած՝ ինքնամոռաց ոգևորութեամբ ընդունում են ինչ տեսակ թէօրիա, ինչ տեսակ վարդապետութիւն ուզում է լինի, միայն թէ նա խոստանար նիւթական շատ աւելի բարիքներ, քան թէ ուրիշներն են խոստանում: Կարելի է ասել, որ գուցէ այդ մտքերը մտցնեն «ուղիղ կարծիքների փոխարէն սխալ կամխաւովնաժողովներ, հանգստութեան փոխարէն — անբաւարարութիւն, հաւատքի փոխարէն — ցանկութիւններ»: Բայց հիմնովին սխալ է այն կարծիքը, իբր թէ ստորին դասակարգերի խռովութեան ու անհանգստութեան միակ պատճառը այդ մտքերն են: Պոռվութիւն ու անհանգստութիւն կախում ունին աւելի հեռաւոր, աւելի խոր պատճառներից, որոնց ոչնչացնելը տարաբախտաբար աւելի դժուար է, քան թի քաղաքական կուսակցութիւնների թէօրիաները: Պոռվութիւն — անհանգստութիւն կախում է այն հասարակական ճնշող ճգնաժամից, որը այնքան աւելի տանջում է, որքան աւելի մեր նրբազգացութիւնն է բարձրանում և որքան աւելի առաջադիմութիւնը պահանջներ է զարգացնում մեր մէջ: Օրինակ, երբ մէկը քիչ միջոցներով չի կարող բաւարարութիւն տալ իր հոգեկան ու մարմնական մեծ պահանջներին, դժգոհ է լինում իր վիճակից, իրան դժբախտ համարում և ձգտում է աւելի լայն միջոցներ ձեռք բերել. մինչդեռ քիչ պահանջներ ունեցող մի ուրիշ անհատ նրա միջոցներով շատ գոհ կը լինէր և դժուար թէ անբաւականութեան այնքան առիթներ ունենար:

Ոստի որոշ քաղաքական վարդապետութիւնների մասին, և նրանց վերագրել ժողովրդական խռովութիւններն ու գանգատները, որոնք առանց նրանց էլ գոյթիւն կ'ունենային, այն-

քան անօգուտ է, որքան անօգուտ է դժգոհել այս կամ այն գիտական ճշմարտութեան վրայ և կամ աշխատել կռուել իրական կեանքի վատ կողմերը ներկայացնող գրականութեան դէմ, առարկելով, թէ նա վատ ազդեցութիւն կարող է ունենալ միքանիսի վրայ: Աւելի շուտ պէտք է դժգոհ լինել վատ կեանքից, քան թէ կեանքի իսկական վատ կողմերը պատկերացընող և նրանց դեղ ու դարման խնդրող գրականութիւնից:

Պէտք է ասել և այն, որ սովորաբար չեն բաւականանում միայն չարիքը մատնացոյց անելով, չեն բաւականանում միայն նրան դարմանելու միջոցները ցոյց տալով, որ կարող է կամաց-կամաց կատարուել և սա բոլորովին իրաւացի ու արդար է. ընդհանրապէս ոմանք խորհուրդ են տալիս բռնի ու յանցաւոր միջոցներ: Իսկապէս չի կարելի համաձայնել այն ուղղութեան հետ, որը թոյլ է տալիս բռնի միջոցներով այս կամ այն գաղափարի յաղթանակը: Սրա վերաբերմամբ Պասկալը ճիշտ է ասել. — «Բռնութիւն ու ճշմարտութիւն երկու խոշոր ոյժեր են, որոնք չեն կարող մէկմէկի վրայ ազդել. ճշմարտութիւնը չի կարող կառավարուել բռնութեամբ և բռնութիւնն էլ չի կարող ճշմարտութիւնից օգտուել իր նպատակների համար»: Այս բոլորը ճիշտ է՝ որպէս թէօրիա, որպէս իդէալ, դէպի որը ձգտում է մարդկութիւնը և անկասկած նրան կը հասնի: Բայց ներկայումս գործնական կեանքի մէջ դժբախտաբար երբեմն անհրաժեշտ է հակառակը անել: Այս բանը ապացուցանելու համար Սիգհելէն ասում է. — «Բաւական է յիշել Իտալիայի ազատութեան պատմութիւնը. առանց յեղափոխութեան մենք այսօր չէինք լինիլ ազատ ու անկախ ժողովուրդ: Պատմութեան տեսակէտից Պասկալի ասածը անմիտ բան է. նրա ասածը թէօրիապէս գործնական կեանքի համար պաշտպանել կը լինէր և՛ անմիտ, և՛ յանցանք. որովհետեւ մենք պարտաւոր են անել ամեն հնարաւոր բան, ինչով որ կարող ենք նպաստել առաջադիմութեանը: Յամենայն դէպս ես կարծում եմ, որ վտանգաւոր վարդապետութիւնների ազդեցութիւնը վերին աստիճանի չափազանցրած է լինում, երբ նրանց միայն թէօրիապէս են բացատրում:

Բոլոր թէօրիաները, մինչև անգամ ամենավտանգաւորները, շատ քիչ նշանակութիւն ունեն մեր կամքի ու բարոյականութեան ոյժի վերաբերմամբ: Նշանակութիւն ունեցողը մեր զգացմունքն է. նա է մեզ ասում, չքաւորին թէ հարուստին, որ բոլոր մարդիկ կեանքում կրում են նիւթական թէ բարոյական զրկանքներ, անարդարութիւններ: Զրկանքի ու անարդարութեան զգացմունքը իւրաքանչիւր անհատի և տարբեր դասա-

կարգերի պատկանող մարդկանց մէջ լինում է զանազան. ընդհանրապէս կեանքի մէջ դժբախտութիւն կրող անհատների և դասակարգերի զբացմունքները լինում են աւելի նուրբ:

Տնտեսական ծանր դրութիւնը շարունակում է և՛ հարուստին, և՛ աղքատին: Տնտեսական թշուառութիւններ երեւոյն՝ առաջանում են շատ անբախտութիւններ, զանազան տեսակ վիշտ, որոնք ոչոքի չեն խնայում և բոլորին էլ իրաւունք են տալիս գանգատուելու: Եթէ այս բոլորը իրաւացի և ճշմարիտ է, որ զըրկանքներն ու անարդարութիւններն են դարձնում ամբողջին իր դրութիւնից գանգատուող ու դժգոհ և ոչ հասարակական զանազան թէօրիաները, որոնք շատ-շատ կարող են անբաւականութիւնը ուժեղացնել, այն ժամանակ միթէ մենք պարտաւոր չենք գէթ մի փոքր ներողամտութեամբ վերաբերուել ամբողջի պատահական ու յանկարծական կրքերին:

Ամեն տեսակ խռովութեան ու ապստամբութեան մասին կարող ենք ասել այն, ինչ որ երկու ընկերք՝ մասին, երբ նրանց մէջ կսիւ է առաջ դալիս: Միշտ լուռ ու հանգիստ ընկերը մի դատարկ աւիժով յանկարծ անագին աղմուկ է բարձրացնում միւսի վրայ: Մէկ ուրիշը կարող է բացազանչել. «Ինչո՞ւ համար է վիճում, կուռւմ, ոչ մի լուրջ պատճառ չկայ»: Բայց աւելի մտերիմը կարող է պատասխանել. — «Ի՞նչ լաւ չգիտէք, նա սաստիկ բարկացած, սաստիկ վիրաւորուած էր տանը...» Ժողովուրդն էլ իր տանը ունի շատ տանջանք ու թախիժ. յարմար ընդհանրապէս պարբերաբար զրգուող տրամադրութիւնը կարող է իր սահմանից դուրս գալ:

Ամբոխային շարժումներ առաջացնող ուրիշ պատճառների հետ միասին պէտք է աչքի առաջ ունենալ նաև ազգի կամ ժողովրդի տրամադրութիւնը որոշ ժամանակում, որը անշուշտ անսպասելի կերպով իր ազդեցութիւնն է անում ամբոխային գործողութիւնների վրայ:

Բացի սրանցից կան և ուրիշ պատճառներ, որոնց սկիզբը պիտի փնդրել իւրաքանչիւր ամբոխի առանձին կազմութեան մէջ, որովհետև ամբոխ կազմող անհատները իրանց զանազան բնաւորութիւններով երբեմն կարող են շատ ազնիւ վարուել և երբեմն էլ յանցանքներ գործել:

Ամենից առաջ զբաղուենք այնպիսի ամբոխով, որը սարսափելի արագութեամբ դիմում է ամենախիստ և ամենասոսկալի գործերի: Ֆրանսիական յեղափոխութիւնը առատ է այդ տեսակ միջադէպերով: Այն ժամանակ ժողովուրդը թալանի ու սպանութեան անյագ ծարաւով մի վայրենի գազանի նման էր: Ոչոք չէր կարող սանձահարել նրա կատաղութիւնը. իւրաքան-

չիւր անհատ տեսնելով իր արիւնարբու բնազդին յարմար ըստէ, աւելի և աւելի կատաղում էր:

Արդեօք միայն մարդասպանութեան բնազդն ու բազմութեան (շատութեան) ազդեցութիւնն էր տանում ժողովրդին դէպի սոսկալի ծայրայեղութիւններ: Արդեօք իրաւունք ունի՞նք ասել, որ ադնիւ գիւղացիներից ու բանուորներից կազմուած ժողովուրդը միանգամից կարող էր զգուհի հրէշ դառնալ: Արդեօք չի՞ կարելի աւելի մեծ հաւանականութեամբ պնդել, որ ամենմի խռովութեան ժամանակ զանազան անյոտահելի տեղերից (միկիտանխանա, տրակտիր կայն) դուրս թոչող կասկածելի անձնաւորութիւնները՝ հասարակական կեանքի այդ տականքները՝ միանում են ժողովրդին և փչացնում նրան:

Այդ կասկածելի անձնաւորութիւնները խաղաղ ժամանակ թաղնուած են իրանց բներում և չեն երևում: Իւրաքանչիւր մարդ իր փորձից գիտէ, հէնց որ հորիզոնի վրայ նշմարւում է մի որևէ քաղաքական փոթորկի նշան և փողոցներում արտայայտւում է ինչ-որ անսովոր ոգևորութիւն այստեղ կամ այնտեղ կատարուող հաւաքումների ու վիճաբանութիւնների մէջ, իսկոյն երևում են այս կամ այն անկիւնում չարագուշակ դէմքեր, որոնց ոչոք մինչև այդ ժամանակ երբէք չէր տեսել: Բոլոր միմեանց միևնոյն հարցն են տալիս.—Ո՞րտեղից երևացին սրանք.—շատերը անհանգիստ մտածում են այդ անձնաւորութիւնների մասին, որոնք հեռուից դէշի (լէշի) հոտն առնելով՝ դուրս են եկել իրանց որջերից:

Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ Փարիզում 1793 թ. երևան են եկել այդ տեսակ անձնաւորութիւններ, որոնք կազմել են այն ժամանակ կատարուող չարագործութիւնների ոգին: Մի ականատես պատմում է, որ յեղափոխութեան առաջին նշանների հետ Փարիզում երևալով անգործների մեծ բազմութիւն՝ սկսում է շրջել փողոցներով, միանում է զանազան արհեստանոցներից դուրս եկող բանուորների հետ և հետըհետէ աւելի խտանում ու աւելի բազմամարդ է դառնում: Զինուած ամեն տեսակ զէնքերով նրանք օդն են թնդացնում իրանց աղմկալի ձայներով: Տներ ղոններ փակւում են, բոլոր փողոցները երևում են անմարդաբնակ ու անապատ, բացի այն փողոցներից, որոնցով անցնում էր այդ խանրձաղանձ ամբոխը: Մի ուրիշ ականատես ասում է.—«Երբ ես վերադառնում էի տուն, Փարիզի ամենաբազմամարդ թաղում այդ աւազակներից շատերը օդի մէջ հրացաններ էին պարպում չնակիրներին սարսափ ազդելու համար»:

Խռովարարների թիւը հասել է մօտ 40 հազարի: Նրանք

մտնում են մասնաւոր տները, հասարակական հիմնարկութիւնները, թաւանում-տանում են բոլորը և մնացածն էլ մեծ մասով կրակի են տալիս: Կառավարութիւնը իզոլը է աշխատում մի տեղ հաւաքուած 25,000 այդպիսի մարդկանց գործ տալ. մեծամասնութիւնը հրաժարուելով՝ միանում է թաւան անողներին և ման է գալիս քաղաքում:

Ժողին գրում է.—«Այդ սովորական յանցաւորներն են դառնում հերոսներ ու ղեկավարներ զանազան տեսակ սպանութիւնների ու կոտորածների. նրանք են կազմում գիլիօտիներ (գլխատելու գործիք) պաշտօնեաները. նրանք են վիճում, միմեանց ձեռքից խլում դահճի պաշտօնը: Այդ տեսակների կանայք նոյնպէս չեն քաշում նրանց միանալու: Կանայք չեն բաւականանում միմիայն խորհուրդ տալով, և մղում են նրանց դէպի զոռելի արարքներ և շատ անգամ նրանցից անցընում են իրանց յանդգնութեամբ ու դաժանութեամբ»: Մի ուրիշը (Մակսիմ Դիւկան) գրում է.—«Շատ դէպքերում զոհը կարող էր ազատուել, եթէ վրայ հասնող կինը առաջին հարուածը չտար և չստէր տղամարդկանց.—Դուք վախկոտներ էք *)»: Վերևում յիշած անձնաւորութիւնների թւում ոչ միայն յանցաւորներն էին մասնակցում յեղափոխութեանը, այլ նրանց մէջ կային նաև խելագարներ: Դրանք դուրս էին եկել հիւանդանոցներից, որոնց դռները բաց էր արել յեղափոխական ամբօխը: Այդ խելագարները կարող էին ազատ կերպով անձնատուր լինել զանազան խենթութիւնների հրապարակներում ու փողոցներում: Այս դժբախտներից շատերը վազում էին Փարիզի փողոցներով և առաջացնում էին ամեն տեղ անկարգութիւն ու սարսափ:

Այսպէս ուրեմն յանցաւորներ, խելագարներ, խելագարների զաւակներ, հարբեցողներ, առհասարակ հասարակական կեանքի տականքն ու ցեխը՝ գրկուած բարոյական զգացմունքից և յանցանքներով փչացած՝ կազմում էին ամենագլխաւոր մասը: Աւելացրէք այս բոլոր անձնաւորութիւններին թիթեալիտ ու ենթարկուող ամբօխի վրայ, այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչ կը ստացուի. նրանք ամբօխին կը տային և՛ դաժան, և՛ խելագար ոգի: Ել ինչո՞ւ պէտք էր զարմանալ, որ նոյն ամբօխի արարքը դաժան լինէր: Այնտեղ, որտեղ շնորհիւ անկարգութեան ոչոք չէ իշխում, չէ ղեկավարում, կարող են ինչ-

*) Դիտողութիւնը ցոյց է տալիս, որ փչացած կինը աւելի վատ է, քան փչացած տղամարդը. սա ընդհանուր է և՛ անհատական, և՛ խմբական գործողութիւնների վերաբերմամբ:

պէս վայրենի կըքերը ազատ կերպով առաջ գալ, այնպէս էլ ամենաբարձր զգացմունքները, միայն դժբախտաբար այդ տեսակ դէպքերում հերոսները անկօր են լինում զսպել մարդասպաններին:

Նման դէպքերում ընդհանուր իրարանցումն և իսկական յանցաւորների դաժան չափազանցութիւնները հասկանալու համար՝ բաղմութիւնից առաջացած բարոյական հարբածութեան վրայ աւելացրէք ֆիզիկական հարբածութիւնը, որը պատահում է մեծ քանակութեամբ գինի և ուրիշ ոգելից խմիչքներ գործածելուց, ահա այն ժամանակ շատ աւելի պարզ կը լինի, թէ ինչպիսի դժոխային դրութիւն կարող է ստացուել:

Տենը գրում է.— «Երբ երկար ժամանակ հրացան ու թընդանօթ է արձակուում, մարդկանց մէջ զարթնում է սպանութեան ձգտում և սպանելու ցանկութիւնը դառնում է նրանց նպատակակէտը (Idée fixe). այդ զգացմունքը ամբողջի մէջ մնում է երկար, մինչև որ նա կարողանայ մի որեւէ յանցանք գործել: Բաւական է, որ միայն լսուի մի հառաչ, այն ժամանակ ամբողջը կը վճռէ իր անելիքը. երբ մէկին սպանեն, բոլորն էլ ցանկանում են նոյնը անելը:

— Ուրեք որ առանց զէնքի էին, պատմում է մի սպայ, քարեր էին շարտում. կանայք ատամներն էին կըրճտացնում և սպառնում էին ինձ բռնեցնելով: Իմ զինուորներից երկուսին սպանեցին յետևումս: Քիչ առաջ գնալով իմ հանդէպ ցցուեց նիզակի վրայ ամրացրած մի գլուխ. ինձ ցոյց էին տալիս և ասում, որ դա Դելոնէ նահանգապետի գլուխն է:

Այսպիսի և աւելի կատաղի տեսարաններ են եղել Ֆրանսիական յեղափոխութեան այս շրջանում. նրանց վրայ մանրամասն կանգ առնելու կարիք չկայ, միայն պէտք է մի բնորոշ դէպք ևս ասել, թէ ինչպէս կատաղի ամբողջ իր գլուխը կորցրած, սպանում հա սպանում է, մինչև անգամ չէ խնայում իր ընկերոջն էլ:

Դիւկանը պատմում է.— «Երբ գերի բռնած քահանաներին գնդակահար էին անում, չարագործներից մէկը բռնում էր իւրաքանչիւրին և պատից այն կողմն էր գցում, որտեղ հրացանաձգութիւն էր կատարւում: Ոչոք չհակառակուեց, միայն վերջին քահանան գիւսադրութիւն ցոյց տալով՝ գլորուեց պատից՝ իր յետևից քաշ տալով մի ուրիշ չարագործի. անհամբեր մարդանց ընկերովը, և՛ քահանային»:

Արդէն սա բոլորովին անմիտ, աննպատակ յանցանք է. Նոյեմբեր, 1904.

սա դէպի վայրենի ցանկութիւնները տանող անմտութիւն է։ Այդ տեսակ բան պատահում է նոյնիսկ կռուող կենդանիների մէջ։ Ֆորելն ասում է.—«Ամազոնկա կոչուող մըջիւնները շատ անգամ այնպէս կատաղած են լինում, որ կծում, ծամծմում են ամեն բան, ինչ որ ընկնում է բերանները, օրինակ, իրանց թըրթուռներին, ընկերներին, ճորտերին. վերջինները փորձում են նրանց հանգստացնել և աշխատում են թաթիկներով այնքան պահել, մինչև որ նրանց բարկութիւնը անցնի»։

Տեսնում էք, որ ամբոխն էլ այդ դրութեան հասնում է և դա նրա մտաւոր ու բարոյական անկման զագաթնակէտը կարող է համարուել։

Բոլորովին տարբեր է 1750 թ. մայիսիսին յեղափոխութիւնը. այս անգամ յանցանքներ կատարելու հակում ունեցող ամբոխը կանգ է առնում, երբ նրա առաջ դրւում է ինչ-որ արգելք ու համարձակութիւն։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներով կարողանում է հանգստացնել չքաւորների ապստամբութիւնները, որոնք այն ժամանակ շատ սովորական էին և պարբերաբար կրկնւում էին։ Առանց հիմնաւոր պատճառի միջանի երեխաների խում են մայրերի ձեռքից, այդ ժամանակ մայրերը սկսում են հասարակական տեղերը աղմկել իրանց յուսահատական զոռում-զոչումով։ Հաւաքւում է ժողովրդական ամբոխը, իրարանցումը աւելանում է, ամեն կողմ երևում են որդեգուրկ մայրեր։ Ոմանք պատմում են, որ ոստիկանական ազնւոնները փող էին պահանջում նրանց երեխաներին վերադարձնելու համար. միջանիսներն էլ զանազան դուշակութիւններ էին անում իրանց զաւակներին սպասող դժբախտ վիճակի մասին։ Ժողովրդի մէջ սկսեցին անտանելի լուրեր պտտուել, որ իբր թէ Լեւզովիկոս XV թագաւորը ցանկանում է անմեղ մանուկներին կոտորել տալ, իբր թէ բժիշկները խորհուրդ են տուել թագաւորին մարդկային արիւնով վաննա ընդունել, որպէսզի զեղխ կեանքով քայքայուած առողջութիւնը կարողանայ վերականգնել։ Դրա համար էլ ազգաբնակչութիւնը սկսում է կռիւ մղել ոստիկանական պաշտօնեաների դէմ. սրանցից մէկը սպանւում է, շատերը ձեծւում են։ Ոստիկանապետի տունը ամեն կողմից շրջապատում են, նա մի կերպ պարտէզով փախչում, ազատւում է։ Ամբոխի կատաղութիւնը հասնում է իր գագաթնակէտին. խօսւում են յարձակում գործելու մասին, մէկ էլ՝ ոստիկանական սպաներից մէկը՝ իր զլխաւորից աւելի անվախ անձնաւորութիւն՝ յանկարծ բաց է անում դարպասը։ Ժողովուրդը այս տեսնելով՝ կանգ է առնում՝ ձեռք չի տալիս

բաց տանը, յետ-յետ է քաշուում և մի քիչ անց՝ վազում է մի ինչ-որ հրապարակի ուղղութեամբ:

Մի նման դէպք տեղի է ունեցել Փարիզում 1832 թ., երբ խոլերան սաստիկ կոտորած էր անում քաղաքում: Պատմում են. — «Երկու յիմարներ վազում էին փողոցով, նրանց յետեից ընկած հալածում էին հազարաւոր կատաղած մարդիկ, մեղադրելով, որ նրանք երեխաներին տուել են թունաւորուած ըլտերըրող (բարակ կտրած հաց — վրան կարագ քսած, միս կամ ուրիշ ուտելիղէն դրած): Երկու հալածականներն շտապով իրանց դցում. են գլխաւոր պահականոցը (հառապտվախթ) և այն տեղ էլ թաղնւում. հնո Պահականոցը մի ակնթարթում շըրջապատւում է ամբոխով. անվերջ սպառնալիքներ են թափում. ոչոք չպիտի կարողանար երկու դժախտին մահից ազատել, եթէ այնտեղ չլինէին մի ոստիկան ու մի քաղաքացի և եթէ սըրանց մտքով չանցնէր մի շատ խելացի միտք, այն է, բուտերբրոդը իրանց մէջ բաժանել և ամբոխի աչքի առաջ ուտել: Այս սառնասրտութիւնն ու հոգու արիութիւնը փոխանակ բարկութեան՝ իսկոյն ամբոխի մէջ առաջացրեց ծիծաղ. Երբեմն այնքան քիչ բան է հարկաւոր ամբոխին կատաղեցնելու և կամ հանգստացնելու համար:»

Դժբախտաբար հազիւ է պատահում, որ ամբոխային շարժումները այսպէս անվտանգ վերջանան: Երբ կարելի է լինում յանկարծակի յաղթել ու զսպել ամբոխին, դրա գլխաւոր պատճառը ոչ թէ արտաքին ազդեցութեան մէջ պիտի փնտրել, այլ իրան ամբոխին յատուկ առանձնայատկութիւնների մէջ:

Այդ տեսակ զղջալու, յանցանք անելուց յետ կանգնելու դէպքեր են լինում նաև առանձին անհատների վերաբերմամբ, եթէ նրանք գրգռուած ու պատահական յանցաւորներ են: Օրինակ, պատահական յանցաւորի զէնքը ձեռքից կարող է ընկնել, եթէ դուք նրա առաջ կանգնէք զինաթափ ու անպաշտպան և կամ մի ուրիշ կերպ կարողանաք նրան համոզել ու հանգստացնել. պատահականութեան ու բոլորական գրգռման արդիւնք կազմող նրա խելագարութիւնը կ'անցնի և նա այլևս ոչո՞չ չի ունենալ բռնութիւն կատարել:

Խելքի գալ, զղջալ չի կարող ժառանգական յանցաւորը, մանաւանդ այն ամբոխը, որը կազմուած է վերին աստիճանի խելագարութեան հասած իսկական յանցաւորներից: Մտածել թէ նրան կարելի է զսպել անդորր հոգով ու եռանդով, այդ միենոյն է, թէ մէկը աշխատէր սառնասրտութեամբ ճանապարհին գիշերով իր վրայ յարձակուող մարդասպանի առաջն առնել և կամ սանձահարել սպառնացող կատաղի խելագարին:

Ամբոխային շարժումներ առաջացնող 1793 թուի մեծ յեղափոխութեան և 1750 թուի փոքրիկ խռովութիւնների շարժառիթը հոգեբանօրէն նման էին, բայց բովանդակութեամբ բոլորովին զանազան:

Կարելի է ենթադրել, որ երբ ժողովրդի մէջ համոզմունք էր կազմուել, թէ նրա երեխաներին գողանում են թագաւորի դատան քմահաճոյքների համար, ժողովրդի այս կարծիքը աւելի հեշտ կարող էր մղել նրան դէպի յանցանքներ, քան թէ շատ ցանկալի քաղաքական բարենորոգումների երեւակայութիւնը: Երկու դէպքում էլ արտաքին պատճառն է մղել երկու ամբոխին դէպի յանցանք. բայց հետևանքները միևնոյն չեն եղել: Ինչո՞ւ.—որովհետև երկու ամբոխը միմեանցից տարբեր են եղել իրանց կազմով: Օրինակ, 1793 թուին Փարիզի փողոցներում խռնուող ամբոխը մեծ մասով կազմուած էր այն տեսակ մարդկանցից, որոնք պատրաստ էին ամեն տեսակ զրկանքներ տանել. նրանց թւում կային խելագարներ և ամեն տեսակ այլասեռութիւններ, որոնք իրանց դիւրաբորբոք բնատրութեամբ և մտաւոր թուլութեամբ կարող էին հեշտ կերպով ծայրայեղութիւնների հասնել: Մինչդեռ 1750 թ. խռովութիւններին մասնակցող ամբոխը բացառաբար կազմուած էր հասարակ ժողովրդից, բանուորներից, հայրերից ու մայրերից, որոնք վախի ու երկիւղի մէջ էին իրանց զաւակների կեանքի համար:

Մի փաստ էլ յիշեմ, որ իսկապէս մարդկանց բնախօսական (ֆիզիօլոգիական) ու հոգեբանական կազմի համաձայն անկարելի է յանցանքների առաջն առնել:

1886 թ. յունուարի 26-ին Դեկազվիւեան հանքերում աշխատող բանուորները վճռեցին գործադուլ անել:

Հրաւիրում են նախկին բանուոր Բեդելին, որի առաջնորդութեամբ ուղևորւում են գտնելու ինժեներ Վատրենին՝ հանքերի գլխաւոր դիրեկտորին, ստիպում են նրան դուրս գալ գրասենեակից և աղաղակներով տանում են քաղաքային խորհրդարան. այստեղ բանուորները ներկայացնում են իրանց պահանջները:

Առաջին պայմանը լինում է այն, որ Վատրենը անմիջապէս հրաժարուի: Սա մերժում է այդ պահանջը, առարկելով, որ իր անմիջական պարտականութիւնն է մնալ պաշտօնում: Երբ նա քաղաքային խորհրդարանից դուրս է գալիս, 1800 բանթող արած բանուորներ նրան են հանդիպում գոռում-գոչումով, որը լաւ բան չէր խոստանում: Այն ժամանակ Վատրենը թազնւում է մօտակայ մի տան մէջ և բարձրանում է

Վերին յարկը: Ամբոխը քարհալած է անում լուսամուտի ապա-
կիները, պատին դնում են սանդուղը և միքանի բանուղորներ
վեր են բարձրանում: Միւսները դուռը ջարդելով՝ ներս են
թափւում տուն՝ կատաղի հեղեղի նման: Նրանց առջևից գնում
էր մի հանքագործ պարանը ձեռքին: Վատրենը լսելով, որ ար-
դէն ամբոխը բարձրանում է, բաշութեամբ ու սառնասրտու-
թեամբ բաց է անում սենեակի դուռը և մենակ կանգնում է
յարձակուողների մէջտեղում: Այս անվրդով ու եռանդոտ ա-
բարքը պէտք է մեղմացնէր ամբոխին, բայց տարաբախտաբար
այս դէպքում ամբոխը կազմուած չէր այն տեսակ մարդկանցից,
որոնք կարող էին զղջալ ու ցրուել:

Բեղելը ձեռնափայտի հարուածով պատում է Վատրենի
ճակատը. ինժեներ Շարուն իզուր է աշխատում Վատրենին
օգնութեան հասնել. Բասինէ անուշով մի բանուղոր սենեակի
դուռը նրա գլխին է շուռ բերում և յետ մղում: Այն ժամա-
նակ Դեկազվիլեան քաղաքապետը աղաչում-պաղատում է Վա-
տրենին զիջանել և ստորագրել հրաժարականը: Վատրենը հա-
մարեան գիտակցութիւնը կորցրած՝ ճակատից աչքերը հոսող
արիւնից ոչինչ չտեսնելով՝ գնում է դէպի գրասեղանը և պատը-
քատում է գրել: Քաղաքապետը վազում է դէպի լուսամուտը,
ամբոխին հանգստացնելու յուսով յայտարարում է, որ Վատրենը
ստորագրում է իր հրաժարականը: Այդ խօսքերի պատասխանը
լինում է մի կատաղի աղաղակ. — «Մեզ պէտք չէ նրա հրաժա-
րականը, տուէք նրա կաշին»: Երեք հանքագործ բռնում են
Վատրենին, տանում են լուսամուտի մօտ և գլխովայր շարտում
են փողոց: Ընկնելով սալայատակի վրայ՝ նրա գլուխը ճեղ-
քւում է: Ամբոխը իսկոյն վրայ է թափւում, ոտներով կոխո-
ւում է նրան, հագուստը պատառ-պատառ անում, մազերը
պոկոտում... Վերջապէս մի կերպ յաջողում է այդ վայրենի
գազանների ճանկերից՝ խել մեռնող թշուառին և տանել հի-
ւանդանոց: Կէսգիշերին մօտ Վատրենը մեռնում է:

Ո՛վքեր էին նրան սպանողները: Արդեօք ազնիւ աշխա-
տաւորներ էին, որոնք մինչև այդ ժամանակ օրինակելի կեանք
էին անցկացրել և յանկարծ բազմութեան ամենակարող ազդե-
ցութեան շնորհիւ դարձել անգութ չարագործներ: Ահա թէ ով-
քեր կային սպանողների թւում. — Գրանտեր՝ մի բանուղով ա-
մենափառ համբաւով. սրա գլուխը իր կազմով աւելի նման էր
բուռի գլխին. շատ վատ մարդ էր և անխնայ կերպով ծեծում էր
իր կնոջը: Շապալ՝, որը երեք անգամ դատի էր ենթարկուած
մարդկանց ծեծելու, վէրքեր հասցնելու և գողութեան համար:
Բլան, որը մեղադրուել էր դարձեալ ծեծի ու վէրքեր հասցնե-

լու պատճառով. սա իր ծնօտներով ու տափակ գլխով աւելի նման էր մի գիշատիչ գազանի: Բեդել՝, որը նոյնպէս պատժի էր ենթարկուել գողութեան, ուրիշներին ծեծելու և վէրքեր հասցնելու համար: Բեդել՝ը առաջարկելիս է եղել 50 ֆրանկով (մօտ 20 բուբլի) սպանել, ու ուզում է լինի. նա ցանկացել է մի աւագակային խումբ կազմել՝ գիւղերում թալան ու կողոպուտ անելու նպատակով: Այս անգամ հաղիւ էր վերջացրել իր չարագործութիւնը, իսկոյն գնաց սրճարան թղթախաղով զբաղուելու համար:

Այս բոլոր անձնաւորութիւնները իրանց մէջ ըստինքեան ունէին չարագործութիւն անելու հակումներ, բայց բանուորական իրարանցումը միմիայն առիթ ու միջոց տուեց բաց անելու իրանց իսկական էութիւնը:

Ուրեմն պարզ է, որ ամբոխի կազմը որոշ ազդեցութիւն ունի կատարուող արարքների վրայ: Լաւ մարդկանցից կադ՝ մուսժ ամբոխը կարող է վատ ճանապարհով գնալ, բայց երբէք չի կարող հասնել այն աստիճան վատութեան, ինչ աստիճան վատութեան կարող է հասնել վատ մարդկանցից կադ՝ մուսժ ամբոխը:

Անհրաժեշտ է նաև աւելացնել այն, որ ոչ միայն ժառանգական յանցաւորների ներկայութիւնը, այլև այն տեսակ ազնիւ մարդկանց ներկայութիւնը կարող է վճռական ազդեցութիւն ունենալ գործի ընթացքի վրայ, որոնք շատ քիչ են զրուում արիւնից և այնքան էլ չեն ազդուում արեան հեղեղից: Նրանցից շատերը եթէ գտնուէին խաղաղասէր ու ազնիւ միջավայրում, միանգամայն կարող էին օրինական ընթացք տալ իրանց հակումներին, թէկուզ նրանք պարապէին այնպիսի արհեստներով ու արդիւնաբերութեամբ, որոնք զգայուն ու կարեկցող մարդի համար թուէին դաժան ու խիստ, ինչպէս օրինակ, մսագործի, զինուորի, վիրաբոյժի պաշտօնն է: Բայց երբ նրանք գտնուեն ամբոխի մէջ, պարզ է, որ ուրիշներից աւելի շուտ կարող կը լինեն մի որևէ յանցանք կատարել:

Պրօպլ'ը գրում է.—«Յայտնի է, որ ֆրանսիական հողը արիւնով ներկող զանազան յեղափոխութիւնների ժամանակ ամենից աւելի մսագործներն են իրանց դաժանութեամբ աչքի ընկնող դեր կատարել և որ նրանք Կարլոս VI թագաւորի օրով արիւնը գետի նման հոսեցնել տուին»:

Մինչև անգամ անհատական յանցաւորներից շատերը այն տեսակ մարդիկ են, որոնք զբաղւում են դաժան արդիւնաբերութեամբ ու արհեստներով: Փաստերի պէտք չկայ, այդ բանը

հաստատուում է կեանքի առօրեայ դէպքերով, որ իւրաքանչիւր մարդ գիտէ իր անձնական դիտողութիւնից:

Ճանաչելով յանցանքներ կատարելու տրամադրութեան ոյժը, չենք կարող ի նկատի չունենալ, որ եթէ կանոնաւոր մարդիկ փչանում են, ընդհակառակը վատերն էլ յաղթանակ են տանում և ազդում ուրիշներին, այդ բոլորը դարձեալ կախում է ամբոխի կազմից ու ոգուց:

Այս բոլորի հետ միասին այժմ հետաքրքիր է այն հարցը, թէ ինչպիսի պատասխանատուութիւն պիտի լինի այն յանցանքների համար, որոնք կատարուում են զրգուռած ամբոխի ազդեցութեան տակ:

IV

Իրաւաքանական եզրակացութիւններ

Նապոլէօնը մանրամասն ուսումնասիրելով օրէնսդիր ժողովի գործողութիւնները, յայտնեց այս նշանաւոր միտքը.— «խմբական (մասսայական) յանցանքները չպէտք է հաշուի առնուին»: Սրանով հաստատեց միմիայն փաստը, ոչ թէ գիտական մի ճշմարտութիւն ասեց:

Գիտութիւնը պարզապէս հասկանում է, որ ամբոխի մէջ կատարուած յանցանքները չեն կարող առանց պատասխանատուութեան մնալ, որովհետեւ հասարակական օրգանիզմն էլ մի անհատի կամ իւրաքանչիւր օրգանիզմի նման ուղէ-չուղէ կը դիմադրէ, կը հակառակուի իր կենսական պայմանները խանգարող գործողութիւններին: Օրինակ, մեզանից թվ կարող է անտարբեր մնալ, երբ մէկը ուղենայ նրան սպանել, ծեծել կամ վնասել. վտանգի ենթարկուող անհատը այսպէս թէ այնպէս կը դիմադրէ, հակազդեցութիւն (reakcia) ցոյց կը տայ և կ'աշխատէ իրան պաշտպանել. նոյն տեսակ է և հասարակութիւնը: Ենթարկուել դիմադրութեան կամ հակազդեցութեան նշանակում է պատասխանատու լինել: Որքան անհրաժեշտ է հակազդեցութիւնը, նոյնքան էլ անհրաժեշտ է պատասխանատուութիւնը: Բայց թվ պիտի լինի պատասխանատու խմբական յանցանքների ժամանակ:

Մի ժամանակ աշխատել են քննութեան առնել ամբոխի կողմից կատարուած յանցանքների պատճառներն ու շարժառիթները. գտել են, որ պատճառներն ու շարժառիթներն այնքան բարդ և այնքան խառնիխուռն են, որ երբեք չի կարելի առանձին-առանձին անհատներին պատասխանատու ճանաչել:

որովհետև յանցանք կատարելու բոլոր պատճառները միացած չեն լինում միայն սրա կամ նրա մէջ. այս հիման վրայ էլ աւելի արդարացի են գտել պատասխանատու համարել ամբողին, որը իր մէջ է պարունակում ժառանգական *) ու հասարակական բոլորը գործօնները (ֆակտոր):

Միթէ հնարաւոր էր, որ ամբողջ ամբոխը պատասխանատու լինէր: Միթէ մեր ժամանակում էլ հնարաւոր է խմբական պատասխանատուութիւն:

Հին ժամանակներում խմբական պատասխանատուութիւնն էր միակ ձևը: Եթէ մինչև անգամ որոշ յանցանք կատարող մարդն էլ յայտնի լինէր, միայն ինքը չէր ենթարկուիլ պատասխանատուութեան, այլ նրա հետ միասին նրա ընտանիքը, ցեղը և ազգականները: Հին օրէնքը հաւասարապէս պատժում էր յանցաւորին, նրա կնոջն ու երեխաներին, եղբայրներին և երբեմն էլ ծնողներին **):

Քաղաքակրթութեան նախնական շրջաններում բնական կերպով կազմուած իւրաքանչիւր խումբ, ինչպէս օրինակ՝ ընտանիք, ազգականներ, ցեղ, ըստինքեան ներկայացնում էր մի անբաժանելի ամբողջութիւն: Անհատը միայն մի մասն էր և ոչ թէ ամբողջութիւնը. նրան համարում էին ոչ թէ օրգանիզմ, այլ միայն մէկ օրգան կամ գործարան. միմիայն նրան պատժել համարում էր անմտութիւն այնպէս, ինչպէս այժմ անհեթեթութիւն են համարում պատժել միայն մարդի մարմնի որևէ մասը ***):

Քաղաքակրթութեան առաջադիմութեան հետ միասին ըսկսուեց կամաց-կամաց առաջ գալ և զարգանալ անհատական պատասխանատուութիւնը: Մինչև 18-րդ դարի վերջը՝ այսպէս թէ այնպէս դեռևս գոյութիւն ունէին հին օրէնքների հետքերը քաղաքական ու կրօնական միջանի յանցանքների վերաբերմամբ: Օրինակ, 17-րդ դարում համարեան բոլոր ևրդական պետութիւնների մէջ սովորութիւն կար քաղաքական յանցա-

*) Ժառանգական գործօնին կամ պատճառին Լոմբրոզոն տնուանում է նաև անօրօգոյղիակամ (մարդաբանական). անտրօպոլոգիան (մարդաբանութիւնը) սահմանափակ մտքով վեր առած՝ պարտաւում է ժառանգական յանցաւորների ուսումնասիրութեամբ:

**) Հին ժամանակներում արեւելքի՝ կիսաքաղաքակրթ պետութիւններն ինչ պատիժ որ տալիս էին յանցաւորին, նոյն պատժին էին ենթարկում նրա կնոջն ու զաւակներին: Նգիպտոսում չարագործի ամբողջ ընտանիքը մահուան էր դատապարտում:

***) Պարսկաստանում մինչև այժմ էլ սովորութիւն կայ յանցաւորի ձեռքը կտրել, աչքերը հանել ևայլն, նայելով յանցանքի տեսակին:

ւորներին ընտանիքներին հայրենիքից արտաքսել—հեռացնել։ Ներկայումս այդ տեսակ բան չկայ. յանցաւորներին դաւակները իրանց դէմքի վրայ չեն կրում անպատուութեան կնիք։ Բայց սովորաբար մի քիչ նախապաշարմունքով ենք վերաբերում յանցաւորներին ընտանիքներին։ Ուրիշ պատճառների հետ միասին սա կախումած է հաւանօրէն այն հանգամանքից, որ ժողովուրդը բնազդաբար գիտէ ժառանգութեան ուժեղ օրէնքը։

Ներկայումս օրէնքը անհատական գործ է դարձրել պատասխանատուութիւնը. այժմ չի կարելի ասել, այսինչ ընտանիքը յանցանք է գործել, նրան պէտք է պատժել. հիմա ասում են. այս ինչ մարդն է կատարել և նա էլ պէտք է պատժուի։

Թէև խմբական պատասխանատուութեան հին գաղափարը ոչնչացել է քաղաքակիրթ աշխարհից, բայց նրա տեղը բռնել է միքանի կէտերով հնին նման և իհարկէ աւելի գիտական մի նոր գաղափար. դա այն պատասխանատուութիւնն է, որը վերագրում ենք հասարակական միջավայրին։

Մենք արդէն գիտենք, որ իւրաքանչիւր յանցանք և առհասարակ մարդկային ամենմի գործ անհատական բնաւորութեան և հասարակական միջավայրի արդիւնք է։

Թէև զանազան չափերով՝ բայց միշտ որոշ յանցանքներին պատասխանատուութիւնը գցում ենք մարդի բնաւորութեան ու նրա միջավայրի վրայ. հէնց այդ է մեր ժամանակուայ խմբական պատասխանատուութիւնը։ Քրէական օրէնքը իր նախնական շրջանում ասում էր.—Յանցանք կատարող անհատը մեղաւոր է, բայց նրա հետ մեղաւոր են նաև նրա ընտանիքը, ազգականները և այլն։ Ներկայումս քրէական օրէնքը համեմատաբար աւելի լաւձր զարգացման հասած լինելով՝ ասում է.—Յանցանք գործողը մեղաւոր է, բայց միևնոյն ժամանակ մեղաւոր է և այն միջավայրը, որը նրան միջոց ու հնարաւորութիւն է տուել այդ յանցանքը կատարելու։

Զանազանութիւնը մեծ է։ Հին ժամանակ մեղաւոր էին ճանաչում և՛ յանցաւորին, և՛ ընտանիքին, երկուսին էլ հաւասարապէս հալածում էին։ Այժմ պատասխանատու է ճանաչում և՛ յանցաւորը, և՛ նրա միջավայրը, բայց հակադրեցութիւնը՝ կամ սովորական կերպով ասած՝ պատիժը միմիայն մեղաւոր անհատի վրայ է ընկնում։ Գուցէ ոմանք ասեն, որ միջավայրի պատասխանատուութիւնը խաբուսիկ ու անօգուտ է։

Սակայն այդպէս չէ, եթէ խնդրի վրայ նայենք այս տեսակէտից.—որքան մեծ լինի միջավայրի պատասխանատուութիւնը, այնքան էլ քիչ կը լինի անհատական պատասխանատուութիւնը։ Մի որևէ յանցանքի վերաբերմամբ որքան աւելի

մեղաւոր լինի միջավայրը, այնքան էլ քիչ մեղաւոր պիտի ճանաչուի անհատը և թեթեւ էլ պատիժ պիտի ստանայ հասարակութեան կողմից կամ ընդհակառակը։ Ուրեմն նայելով միջավայրի պատասխանատուութեան չափին՝ կարող են անհատի յանցանքն ու պատիժը թեթեւանալ կամ ծանրանալ։

Օրինակ, երբ սպանութեան համարեւ ըրոր պատճառները գտնոււմ են յանցանք կատարող անհատի մէջ, այն ժամանակ հասարակութիւնը աւելի խիստ կերպով է պատժում յանցաւորին. ընդհակառակը գրգռուած դրութեան մէջ կատարուած սպանութեան պատճառները մեծ մասով պատկանում են միջավայրին և դրա համար էլ այդ տեսակ դէպքերում անհատը աւելի թեթեւ կերպով է պատժոււմ հասարակութեան կողմից։

Եթէ կարելի լինի ապացուցանել, որ կատարուած յանցանքների ըրոր պատճառները ամբողջովին ընկնում են միջավայրի վրայ, այն ժամանակ նա պէտք է ընդունէ իր վրայ ամբողջ պատասխանատուութիւնը, իսկ անհատը ազատ կը լինի պատասխանատուութիւնից։

Երբ աւագակը գիշերով յարձակուի մէկի վրայ և նա ինքը՝ նապաշտպանութեան համար սպանէ աւագակին, ոչ մի կերպով պատասխանատու չի լինիլ, որովհետեւ պատճառներն ու պատասխանատուութիւնը ամբողջովին պատկանում են միջավայրին կամ աւագակի ապօրինի յարձակումին։

Մինչև այժմ մեր ասածներից հետևում է, որ ներկայումս խմբական պատասխանատուութեան թէօրիան ամեն տեսակ յանցանք կատարելու պատճառները չէ վիտրում միմիայն անհատի, այլև նրա միջավայրի մէջ։ Այժմեան անհատականացրած պատասխանատուութեան համաձայն միջավայրը չի կարող պատժուել. չի կարող պատժի ենթարկուել նաև ամբողջ, միակ պատասխանատու մնում է անհատը. բայց որովհետև նրա պատասխանատուութիւնը կախուած է միջավայրի պատասխանատուութիւնից, դրա համար անհրաժեշտ է վերջինի չափն իմանալ. հասարակութիւնը միայն սրանով կարող է որոշել անհատական պատժի չափը։

Այժմ հետաքրքիր է իմանալ, ամբողջային շարժումների ժամանակ յանցանք կատարող անհատը ի՞նչ աստիճանի վտանգաւոր կարող է համարուել։ Եթէ այդ մարդը հեռու լինի դրդուած ու կատաղի ամբոխի հազարումի տեսակ ներշնչութեանից, այն ժամանակ իր նորմալ՝ վիճակով արդեօք վտանգաւոր կը լինի հասարակութեան համար։ Կարող է՝ պատահել, որ ազնիւ մարդը ամբոխի կողմից առաջնորդուի դէպի չարութիւն, ընկնի մի տեսակ խելագարութեան մէջ, բայց երբ նոյն դրու-

թիւնը անցնի, նրա վրայ հետքեր բոլորովին չմնան և նա ստիպուած չլինի քրէական պատժի ենթարկուել:

Այս հարցերին պատասխանելու համար ոչ թէ տեսականապէս, այլ գործնական կերպով պէտք է գիտենալ, թէ իւրաքանչիւր անգամ ամբողջ ի՞նչ չափով և ի՞նչ ոյժով ազդել ներշնչել է անհատին վատ ձգտումներ:

Արդէն գիտենք, որ ամբողջ ազդեցութիւնը անհատներին վրայ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներշնչում: Այժմ անհրաժեշտ է գիտենալ, թէ ներշնչումը ի՞նչ չափով կարող է ազդել անհատի վրայ, արդեօք նա պահճւմ է իր ինքնոյրուենութիւնը, թէ՞ դառնում սեփական կամքից զուրկ մի արարած կամ կոյր գործիք ամբողջի ձեռքին:

Մեր հարցի պատասխանը ստանալու համար դիմենք հիպնոսական երևոյթներին. թէև ճիշտ է, որ հիպնոսական քնի և արթուն վիճակի մէջ եղած ներշնչումը հաւասար բաներ չեն, բայց սրանց մէջ բաւական նմանութիւն կայ, որովհետև ներշնչումը հիպնոսելու առաջին աստիճանն է: Սրանց մէջ եղած միակ տարբերութիւնն այն է, որ հիպնոսական քնի մէջ ներշնչումը աւելի ուժեղ ազդեցութիւն է անում, քան թէ նորմալ՝ (բնական) դրութեան մէջ, երբ անհատը արթուն է:

Մի խումբ գիտնականներ կարծում են, հիպնոսական ներշնչումը անհատին զրկում է ինքնուրոյնութիւնից և դարձնում է կատարեալ մեքենայ. հիպնոսողը իր հրամաններով կարող է նրան անել տալ՝ ինչ որ ցանկանայ: Այս միտքը ապացուցանելու համար նրանք բերում են մի շարք փաստեր: Օրինակ, հիպնոսուած մի լաւ ու բարի աղջիկ ատրճառակ է արձակել իր հարազատ մօր վրայ: Մի աղնիւ երիտասարդ փորձել է թունաւորել իր սիրելի մօրաքրոջը: Մի ջահիլ աղջիկ սպանում է բժշկին այն պատճառով, որ նա վատ է բժշկել: Մէկ ուրիշը թունաւորում է իրան անծանօթ մի մարդի կայլն:

Շատ դէպքերում այդպիսի հետևանքի հասնել չի կարելի. հիպնոսողը հրկար ժամանակ պիտի կռուի անհատի բնաւորութեան հական գծերի ու համոզմունքների հետ, որը այսուէս թէ այնպէս հակառակութիւն ցոյց կը տայ:

Այս կարծիքին հակառակ խումբը՝ Շարկօի շկոլան՝ հիպնոսական ներշնչումը շատ իրաւացի կերպով չէ ճանաչում ամենակարող ոյժ հետևեալ փաստերի հիման վրայ:

Պետքը ասում է.— Բժշկուողների թւում կար մի երիտասարդ կին. նա հեշտ կերպով հիպնոսանում էր, առանց դժուարութեան կարելի էր նրա վրայ զանազան փորձեր կատարել, նմանուելու շարժումներ անել տալ և առաջացնել նրա

մէջ պատրանքներ (խլիւզիա) ու հալիւցինացիա *)։ Բայց բոլորովին անկարելի էր նրան ստիպել որևէ մէկին խփելու։ Եթէ հրամանը շատ խիստ էր լինում, այն ժամանակ նա բարձրացնում էր ձեռքը և իսկոյն ընկնում էր լետարգիակա՛ն քնի մէջ»)։ Կը նշանակէ հարուածը չէր կարող տեղի ունենալ։

Նոյն գիտնականը պատմում է.—«Քնացնում եմ իմ հիւանդին (երիտասարդ կին)։ սեղանի վրայ դնելով մի արծաթ փող՝ ասում եմ. երբ կը զարթնէք, կը գնաք դէպի սեղանը, կը վերցնէք այն արծաթ փողը, որ մէկը մոռացմամբ թողել է. փողը թագցրէք ձեր գրպանում. դա մի փոքրիկ գողութիւն է, որ ձեզ համար ոչ մի վատ հետեանք չի կարող ունենալ»։ Յետոյ զարթնեցնում եմ նրան։ Կինը գնում է դէպի սեղանը, որոնում է փողը և մի փոքր տատանումից յետոյ գցում է գրպանը. բայց իսկոյն հանում է նրան և վերադարձնում ինձ, ասելով, որ այդ փողը նրան չէ պատկանում, անհրաժեշտ է գտնել մոռացողին և տալ»։

—«Ես չեմ ուզում այդ փողը ինձ մօտ պահել, ասաց նա, դա գողութիւն կը լինէր, իսկ չէ՞ որ ես գող չեմ»։

Ժիլ Դեյատուրետ մի շատ նման դէպք է պատմում։ —«Մենք մի անգամ ներշնչում էինք մի կնոջ՝ Մ.-ին, որ նա շատ շոգել է։ Իսկոյն Մ.-ը սկսում է իր ճակատը սրբել, իբր թէ բոլորովին քրտնած է և յայտնում է, որ անտանելի շոգ է։

—«Գնանք լողանանք»։

—«Ի՞նչպէս, ձեզ հետ»։

—«Ինչո՞ւ չէ, մի՞թէ դուք չգիտէք, որ կանայք ու տղամարդիկ առանց քաշուելու միասին լողանում են ծովում»։

Դա ըստ երևոյթին, բաւականին համոզեցուցիչ է թւում նրան։

—«Առանց քաշուելու շորերդ հանի՛ր»։

Նա տատանւում է. վերջապէս արձակում է մազերը, հանում է կօշիկները և կանգ առնում։

*) Կարող են նրան ներշնչել. դեղ է զրուած մէջքիդ, նա ստատիկ կ'այրէ. պիտի դիմանաս. չնայած որ մէջքին դրել են հասարակ թուղթ, բայց և այնպէս նա ստատիկ տանջուելու նշաններ ցոյց կը տայ. սա պատրանք է։ Կարելի է նրան ներշնչել. մայրդ առաջիդ կանգնած է, բարեկը նրան և համբուրիք ձեռքը. թէև մայրը այնտեղ չէ, բայց նրան երևում է, թէ մօտին է. բարեկելու և համբուրելու շարժումներ կ'անէ. ահա սա էլ հալիւցինացիա է։ Արթուն ժամանակ էլ պատահում է պատրանք. մի հոգեպէս հիւանդին կառքի ձայնը ևայլն կարող է թուալ հայհոյանք ևայլն։ Հոգեպէս հիւանդ և մինչև անգամ հանճարաւոր մարդիկ ընկնում են հալիւցինացիայի մէջ. սրանք տեսնում, լուծւում են այնպիսի բաներ, որ իսկպէս այդ բոլորէն գոյութիւն չունեն նրանց շուրջը։

— «Ի՛նչ հրամայում եմ քեզ, որ բոլոր շորերդ հանես»:

Նա կարմրում է և ըստ երևոյթին ծանր ու դժուար մը տաժմունքների մէջ է. վերջապէս յուզուած՝ վերնազգեստը հանում է:

— «Էլի, էլի»:

«Այս կոպիտ հրամանի ժամանակ երևում էր, որ Վ.-ն սաստիկ տանջոււմ էր. նա պատրաստուում է հնազանդուել, բայց նրա կամքը դիմադրում է. նրա ամօթի զգացմունքը աւելի ուժեղ է ներշնչումից. Վ.-ի մարմինը ձգւում է, ես հազիւ հազ կարողանում եմ միջամտել և ուշաթափութեան (հիստերիա) առաջն առնել»:

«Վ.-ն սաստիկ ամօթխած էր, ասում է ժիւր. պարզ է, որ միայն ամօթխածութեան շնորհիւ նա համարեան անգիտակցաբար այդպիսի դիմադրութիւն է ցոյց տալիս. մինչդեռ Սարա Բ. նոյն պայմաններում առանց տատանուելու շորերը դէն է շարտում և լողանում երեակայական ծովում»:

Հիպնոսական քնի ժամանակ այս կամ այն հրամանը անցկացնելու համար անպատճառ պէտք է, որ հիպնոսուող անհատը իր օրգանիզմի մէջ ունենայ նոյն հրամանի վերաբերմամբ որոշ տրամադրութիւն: Երբ մի որևէ դադափար բոլորովին հակառակ է անհատի համոզմունքներին, դա չի կարող իրականանալ նոյնիսկ հիպնոսական վիճակում: Սա է հիպնոտիզմի խոշոր ներկայացուցիչների եզրակացութիւնը:

Այս մասին ճիշտ է մի գիտնականի (Կամպիլի) ասածը.

— «Ներշնչումները պէտք է համաձայն լինեն մարդի ներքին աշխարհի հետ. ուստի բոլոր ներշնչումները չեն կարող իրականանալ, այլ միմիայն նրանք իրականութիւն կը ստանան, որոնք անհատը ընդունակ է կատարել իր կեանքի որոշ պայմաններում և որոշ մոմենտներում»:

Ինչպէս վարակիչ հիւանդութիւնները անխտիր չեն կարող անցնել բոլոր մարդկանց, այլ անցնում են միմիայն նրանց, որոնց օրգանիզմը որոշ չափով տրամադիր է վարակուելու, այնպէս էլ ներշնչումը չի կարող բոլորին ազդել ու վարակել. շատ սխալ է կարծել, թէ ներշնչումը կարող է ամենմի մարդի ստիպել այս կամ այն բանը անելու, ստիպմունքով կարելի է անել տալ այն, դէպի որը քիչ թէ շատ տրամադիր է նա:

Հետեաբար ներշնչումը կարող է փոխել անհատականութիւնը, այն աստիճանի թուլացնել նրա կամքը, որ կամքի գոյութիւնը համարեան զգալի չլինի. բայց այս բոլորի հետ միասին անհատականութիւնն ու կամքը բոլորովին մեռած չեն լինիլ, անհատը չի դառնալ կոյր գործիք և դեռ ցոյց կը տայ

գէթ գիտակցութեան նշոյլ: Սրան ապացոյց կարող են լինել այն փաստերը, որ անհատները խիստ դիմադրութիւն են ցոյց տալիս որոշ ներշնչումներին:

Ասացի, որ հիպնոստոզի մէջ կայ գիտակցութեան փոքրիկ նշոյլ. այդպիսի թեթեւ գիտակցութիւն գոյութիւն ունի երազ տեսնողի, շատ հարթած մարդի և լուսնոտի (գիշերները քընած դրութեամբ ման եկող) մէջ: Երազ տեսնողը իր երազն է յիշում ու պատմում, հարթածը շատ անգամ լաւ յիշում է իր արածները եայնս:

Մեր ասած փաստերից դուրս է դալիս հետեւեալ տրամաբանական եզրակացութիւնը.—Եթէ հիպնոսական ներշնչումով, որ ներշնչումներից ամենաուժեղն է, չի կարելի մարդկային անհատականութիւնը բոլորովին ոչնչացնել, այլ միայն կարելի է թուլացնել, ապա ուրեմն աւելի մեծ իրաւունքով կարող ենք ասել, որ այդ անհատականութիւնը արթուն վիճակի մէջ էլ կը մնայ, եթէ մինչև անգամ՝ օրինակ՝ ամբոխի ներշնչումը հասնի ամենաբարձր աստիճանին:

Երբ անհատը յանցանք է կատարում ամբոխային շարժումների ժամանակ միշտ էլ շարժառիթներից (մոտիւ) մի մասը գտնուած է նրա ֆիզիոլոգիական ու հոգեբանական կազմի մէջ, հետևաբար այդպիսի զէպքերում անհատը միշտ էլ պատասխանատու կը լինի օրէնքի առաջ, ճշմարիտ ազնիւ մարդը չի հնազանդուիլ հիպնոստոզի յանցաւոր հրամաններին և չի էլ կարող ամբոխային զեղուն զգացմունքների ալիքներին կու գնալ: Մարդը ամեն տեսակ պատահականութիւններից կարող է մի փոքր շեղուել, բայց ոչ խոնարհուել նրանց առաջ:

Արդեօք սրանից պէտք է հետեցնենք, թէ զրգուած ամբոխի ազդեցութեան տակ յանցանք կատարող բոլոր մարդիկը առանց բացառութեան իսկական յանցաւորներ են: Շատ սխալ է այդպէս մտածել. ամբոխի մէջ յաճախ լինում են ժառանգական յանցաւորներ: Ընդհանուրի ազդեցութեամբ յանցանք կատարողներից շատերը այդպէս չեն, այլ շատ-շատ նրանք բնաւորութեամբ թոյլ մարդիկ են:

Իզուր չէ ասուած՝ կան երկաթի պէս բնաւորութեան մարդիկ և կան մեղրամոմի պէս փափուկները. վերջինները չկարողանալով միջավայրը իրանց յարմարեցնել, շատ անգամ իրանք են յարմարում նրան. այն կողմն են դառնում, որ կողմը քամին փչում է: Լինում են ջղային մարդիկ, որոնք ամեն հասարակ զրգուածից պայթում են:

Ժողին ասում է.—«1870 թուին տեսայ, թէ ամբոխը ինչպէս հետևում էր մի գնեւերալի կառքին և ամեն կերպ ցան-

կանում էր պաշտօնակայից իմանալ ինչ-որ քաղաքական գաղտնիք: Այդ իրարանցման մէջ տեսայ ինձ ծանօթ շուտ յափըտակուող մի երիտասարդի, որ կանոնաւոր, հանդարտ, աշխատասէր, բարի և անպայման ազնիւ մարդ էր: Նա յանկարծ սկսեց բարձր ձայնով ատրճանակ պահանջել, որպէսզի յամառ գեներալին սպանէ: Եթէ նրա ձեռքին զէնք լինէր, չեմ կրաշխաւորում, թէ ինչ կարող էր առաջ գալ»:

Իհարկէ այս տեսակներին չի կարելի չարագործ անուանել. աւելի շուտ կ'ասենք, որ նրանք միայն թոյլ բնաւորութեան մարդիկ են:

Շնորհիւ յեղափոխութեան՝ ամբոխի մէջ ամենակարճ ժամանակում կատարւում է այն, ինչ որ շատ դանդաղ կերպով է կատարւում մասնաւոր կեանքի մէջ աստիճանական զարգացման (էվոլյուցիա) շնորհիւ: Ամբոխային շարժումների ժամանակ վատ օրինակների ազդեցութիւնից որոշ անհատների մէջ լուրւմ են բարի զգացմունքները, նրանց փոխարէն զարթնում, առաջ են դալիս վայրենի բնազդներ, մէկը դառնում է պատահական յանցաւոր, միւսը յաճախ կրկնուող վատ դէպքերից լինում է սովորական յանցաւոր և այլն: Ահա սա է պատճառը, որ ամբոխի մէջ գտնուած անհատներից շատերը հասնում են մինչև յանցանք գործելու աստիճանին: Ապա ուրեմն բոլոր յանցաւորներին միևնոյն արշինով չափել չի կարելի: Այս բոլորի հետ միասին պէտք է աչքի առաջ ունենալ նաև յանցանք կատարելու շարժառիթները (մոտիւնները):

Ինչպէս յայտնի է, յաճախ ամբոխ է կազմւում շատ մասով լոկ հետաքրքրուողներից. գալիս են նայելու ինչ կայ, ինչ չկայ: Սրանում է կայանում ամբոխ կազմելու առաջին բոլէշների հոգեբանական պայմանը: Դրանով չէ սահմանափակւում. կամաց-կամաց ամեն բան կերպարանափոխւում է. ցոյցի, աղաղակների և կամ միտինգներում ասուած ճառերի տաքանալու հետ միասին բազմերանգ ամբոխի մէջ առաջանում է բաւական տարօրինակ երևոյթ. զանազանակերպութիւնը ոչնչանում և նրա տեղը բռնում է համարեա կատարեալ միակերպութիւն: Աւելի վախկոտները տեսնելով գործի լուրջ կերպարանք ստանալը՝ առաջին յարմար բոլէշին թողնում հեռանում են. մնացածները կամաց-կամաց հասնում են միևնոյն գրգռման աստիճանին: Սկզբում միայն միջանի անհատների միացնող շարժառիթը յայտնի է լինում բոլորին, թափանցում է իւրաքանչիւրի սրտի ու հոգու մէջ. ամբոխը դառնում է մի սիրտ և մի հոգի: Երբ 1750 թուին ժողովուրդը խռնուած էր աստիկանատան առաջ բողոքելու հրէշաւոր դաժանութեան դէմ,

նրա կատարած յանցանքը կարելի էր աւելի ներելի գտնել, քան թէ ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ արած չարագործութիւնները, որոնք հետեանք էին միմիայն անհասկանալի արեւնարբութեան: Սօսք չկայ, որ անարդարութիւնների ու կեղտոտութիւնների դէմ կռուելիս յանցագործութեան հասնել բոլորովին ուրիշ բան է, քան թէ թաւանել ու սպանել չնչին պատճառով կամ զուտ անբարոյական նպատակներով:

Անշուշտ, թէ խմբական և թէ անհատական յանցանքի համար գլխաւոր կէտերից մէկն էլ շարժառիթն է, որը նոյնպէս աչքի առաջ պէտք է ունենալ պատասխանատուութեան չափը որոշելիս: Դա աւելի կարեւոր է մանաւանդ այն տեսակէտից, որ սկզբում միջանի անհատների սեփականութիւն կազմող շարժառիթը դեռ ամբողջի խաղաղ ժամանակ հետզհետէ տարածուելով՝ իւրաքանչիւրի համար դառնում է գիտակցական, հասկանալի. հետեալաբար մեծ իրաւունքով կարելի կը լինի լիութիւն հաշիւ պահանջել ամենմի անձնաւորութիւնից:

Երբ որոշ դէպքերում արդարացի է ամբողջային անսպասելի յանցանքների համար պատասխանատուութիւն պահանջել առանձին անհատներից, ապա ուրեմն շատ աւելի արդարացի է պատասխանատուութեան ենթարկել մարդկանց կանխամըտածուած յանցանքները:

Ամբողջ է հաւաքւում ոչ միշտ նրա համար, որպէսզի մի որեւէ պահանջ անէ կամ ինչ-որ բանի դէմ բողոքէ. ոչ միշտ յանցանքները յանկարծակի են կատարւում շնորհիւ հոգեկան յուզումների, որի մասին վերևում խօսեցինք: Երբեմն էլ այնպէս է պատահում, որ միջանի անհատներ որոշ նպատակով միանում են՝ ամբողջի մէջ խոտովութիւն առաջացնելու և յանցանքներ կատարելու:

Ամբողջային շարժումների ժամանակ կատարուող յանցանքների անթիւ պատճառները ուսումնասիրող մի շարք գիտնականներ ձգտում են հասնել այն կէտին, որ հնարաւորութիւն ունենան աւելի պարզ, աւելի ձեռնհաս կերպով դատելու նոյն հարցի մասին. ապա թէ ոչ ձգտել ընդհանուր օրէնքներ տալ ամեն տեսակ պատահած դէպքի համար անկարելի է: Իւրաքանչիւր դէպքի համար պէտք է առանձին մանրամասն քննութիւն կատարել և դրա համապատասխան որոշել անհատների պատասխանատուութեան և կամ ոչ պատասխանատուութեան չափը *):

*) Ամբողջի յանցանքների մտին դատելիս անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել սեռի և հասակի վրայ. որովհետեւ տղան է, որ կանայք, երեխաները

Քանի որ յանցանքը համարում ենք հասարակական, անհատական և մինչև անգամ տնտեսական, տեղական ու կլիմայական բարդ պայմանների արդիւնք, ապա ուրեմն դատավարութեան ժամանակ ոչ թէ յանցանքը, այլ յանցաւորին պէտք է աչքի առաջ ունենալ: Միևնոյն յանցանքի համար զանազան անհատներ կարող են զանազան չափով մեղաւոր լինել: զանազան պատասխանատուութիւն ու պատիժ կրել: Օրինակ, հոգեպէս հիւանդի համար դատավարութիւնը պիտի դադարի և նրա տեղը պիտի բռնեն հոգեբանն ու հոգեբոյժը. նա պիտի տարուի ոչ թէ բանտ, այլ հիւանդանոց. յանցաւորը ուղղիչ հաստատութիւնների մէջ պիտի պահուի. չքաւորութիւնից յանցանք գործողին պէտք է տալ առօրեայ ապրուստը ապահովող պարագումունք: Կան պատահական ու հարեցող յանցաւորներ, որոնք պայմաններին նայած կամ թոյլ կերպով պիտի պատասխանատու լինեն և կամ բոլորովին ազատ ճանաչուեն պատասխանատուութիւնից և այլն: Այս տեսակները պէտք է վայելեն բժշկական ու մանկավարժական նուրբ ու լայն խնամատարութիւն և ոչ թէ հալածուեն: Առհասարակ ներկայումս դատավարութիւնը անհամեմատ աւելի մարդասիրութեամբ է վերաբերում յանցաւորներին, քան թէ հին ժամանակներում և քան թէ այժմ ոչ-քաղաքակիրթ ազգերի մէջ:

Յանցագործութեան բոլոր պատճառները մենակ անհատի մէջ չլինելու համար և միւս կողմից անհատական տարբերութիւններն էլ ի նկատի առած՝ շատ դժուար է ընդհանուր օրէնքներ սահմանել նոյնիսկ անհատապէս կատարուած յանցանքների համար: Եթէ այս այսպէս է, ապա ուրեմն յիշեալ աւելի դժուար է ընդհանուր օրէնք դնել ամբողջային շարժումների ժամանակ պատահած յանցանքների վերաբերմամբ:

Որոշ դէպքերում դժուար է անհատին մեղադրել, մանաւանդ աւելի դժուար, երբ յանցանքը խմբական է:

Քաղաքակիրթութիւնը իր առաջադիմութեամբ պէտք է աշխատի աստիճանաբար այնքան բարձրացնել մասսային (բազմութեանը) մտաւոր, բարոյական ու տնտեսական դրութեամբ, որ մասսան՝ ինչպէս և ամբողջ՝ այլևս զարհուրելի չլիցաւայ և շատ մասով բարիք դառնայ հասարակական կեանքի համար:

և մինչև անգամ երկտասարդները աւելի հեշտ են ազդում ներշնչումից, քան թէ չափադասները: Բամբոսները զրուում է. — «Երեխայութիւնը հալուած մտադրեման է, որը կարելի է ձուլել ամեն տեսակ ձեռք... Երեխայի, կնոջ կամ երեքտասարդի նման տեմպերամենտ ունեցողները ամենից շատ են ընդունում արտաքին տպաւորութիւններ և վարակւում համաճարակներից»:

V

Բազմութեան բռնակալութիւնը եւ խմբական հոգեբանութիւնը

Ամենահաւանորէն ընթերցողը մոռացած չի լինիլ նմանութեան-նեղընչման թէօրիան, որի մասին խօսուեց ամբոխային հոգեբանութեան մէջ:

Մարդկութեան առաջադիմութեան հետ միասին հետզհետէ առանձին նշանակութիւն է ստացել բազմութեան ձայնը: Նոյն սկզբունքից է առաջ եկել քաղաքակիրթ ազգերի սահմանադրական կառավարութիւնը, այն է, բազմութեան ձայնին նշանակութիւն տալ և գործերը կատարել խմբական ոյժերով ու խմբական խորհրդակցութեամբ: Մենք գիտենք, որ խմբական գործողութիւնները մէջ առանձին ու նշանաւոր դեր է խաղում նմանութեան-նեղընչման թէօրիան. այս տեսակ դէպքերում անհատական մտաւոր ու բարոյական ընդունակութիւնները շատ անգամ իջնում, ցածանում են. բազմութիւնն է լինում տիրողն ու յաղթանակողը: Արդեօք ճորջան իրաւացի է բազմութեան բռնակալութիւնը և սա արդեօք փաստակար չէ՞ մարդկային առաջադիմութեան համար:

Բազմութեան բռնակալութեան դէմ զանազան տեսակէտներէց կուտւում են երկու շարք գիտնականներ. մէկը՝ անհատականները (ինդիվիդուալիստ) թուով աւելի շատ են և հետևաբար աւելի ուժեղ. միւսը՝ մտքի ազնուականներն (արիստոկրատ) են: Անհատականներէց ի նկատի առնելով անգլիացի Սալաւրտ Միլլին և Հերբերտ Սպենսերին՝ կարող ենք ասել, որ նրանք ձգտում են այս միակ նպատակին. — կառավարութեան իրաւունքները սահմանափակել և հետզհետէ աւելացնել անհատի իրաւունքները: Այս մասին Սպենսերը գրում է. — «Անցեալում ազատամտութեան գործն (ֆունկցիա) էր թագաւորների իրաւունքներին սահման դնել. ներկայ ազատամտութեան գործն է ապագայում սահմանափակել պարլամենտի ոյժն ու իրաւունքը»:

Սպենսերից առաջ Ստ. Միլլը դրա նման հետեւալ միտքն է ասել. — «Եթէ ամբողջ մարդկային ցեղը՝ բացառութեամբ մէկի՝ միւսնոյն կարծիքն ունենար, իսկ այդ մէկը լինէր հակառակ կարծիքի, այն ժամանակ ինչպէս մարդկութիւնը իրաւունք չէր ունենալ ստիպել նրան լռելու, այնպէս էլ այն մարդը իրաւունք չէր ունենալ (եթէ կարողանար) ստիպել մարդկութեանը լռելու»:

Այսպէս Սեպհնսերը և Միւլը ցանկանում են յարգանք ցոյց տալ փոքրամասնութեանը, որին անկասկած ոչ ոք չի սկսիլ հակառակել:

Յիշեալ երկու պատկառելի հեղինակը և իհարկէ նրանց աշակերտները երբէք չեն ոչնչացնում բազմութեան իրաւունքը, որի վրայ է հաստատուած մեր ամբողջ քաղաքականութիւնը. նրանք ընդունում են, որ քանակութիւնը—բազմութիւնը պէտք է լինի միակ դատաւորը բոլոր վճիռների մէջ և այս վճիռների տալը պետութեան ու պարլամենտի իրաւունքն է. հրքան կարելի է նրանք ցանկանում են միմիայն քջացնել պետութեան գործն (ֆունկցիա) ու պարտականութիւնը, որպէսզի դրանով անհատին տրուի աւելի ազատութիւն և յարմարութիւն:

Ազնուական համարուածները ընդհակառակն են կարծում, որ բազմութեան բռնակալութիւնը անհեթեթութիւն է և անհա թէ ինչու.—նրանց ասելով բազմութիւնը իր մտաւորով, իր հասկացողութեամբ անճաշակ ու սահմանափակ է և ուրիշ կերպ չի էլ կարող լինել. թոյլ տալ, որ նա կառավարէ, դա միևնոյն է, թէ կառավարութեան ղեկը յանձնել անձեռնհաս մարդկանց: Տրամաբանութիւնը պահանջում է, որ աշխարհը կառավարեն միքանի ինտելլիգենտ մարդիկ և ոչ թէ տգէտ բազմութիւնը: Անհեթեթ բան է ընդունել, որ հարիւր գիւղացու կամ հարիւր բանուորի ձայնը հաւասար լինի կրթուած հարիւր մարդկանց ձայնին:

Մտքի ազնուականները չափից աւելի խոնարհուում են հանճարի առաջ, նրան դարձնում են կուռք և սաստիկ արհամարհում են հասարակ մանկանացունքներին. նրանք մերժում են սովորական մարդկանց մի որևէ իրաւունք տալ և արտօնում են միմիայն հանճարներին աշխարհը կառավարելու:

Եթէ մի կողմ դնենք քաղաքական կանխամտածուած գաղափարները ընդհանուր ձայնատուութեան վերաբերմամբ, այն ժամանակ ըստինքեան հարց է ծագում.—Խնչու պէտք է Սպենսերին հաւասար ձայն ունենայ մի բանուոր, մի դռնապան և այլն: Կամայ-ակամայ մարդ կարող է կարծել, թէ օրէնքի մէջ այնպիսի տրամաբանութիւն չկայ, ինչպիսին գոյութիւն ունի իրական կեանքում: Խնչպէս կարելի է միմեանցից տարբեր երկու անձնաւորութեան միևնոյն գծի վրայ դնել: Սակայն համեմատաբար աւելի խոր ուսումնասիրութիւնից յետոյ առաջին տպաւորութիւնը իսկոյն փոխուում և շատ է փոխուում:

Իսկապէս ճիշտ է, որ եթէ առաւելութիւն տրուի բազմութեանը, այն ժամանակ միշտ յաղթանակը կը տանեն սահմանափակ խելքով մարդկանց մտքերն ու կարծիքները միմիայն

թուական շատութեան շնորհիւ Ամենից աւելի հաւանական չէ, որ այս կամ այն գաղափարը դէպի ինքն է գրաւում բազմաթիւ ձայներ, որը աւելի գրաւիչ է և տռաջացի է խելացի, մեծ մարդի գլխից:

Մի թեթև հայեացք դեմքը պատմութեան վրայ: Հին ժամանակներում, երբ ֆիզիկական բռնի ոյժն էր թագաւորում, հիմ էր իշխում, կառավարում համայնքին, տեղին ևայլն, արդեօք ամենից թոյլը: Միթէ այժմ էլ քիւրդերի և ուրիշ կիսա-վայրենի ժողովուրդների մէջ ցեղապետը կարող է ամենից թոյլը լինել:

Աւելի ուշ՝ երբ ֆիզիկական ոյժին միացաւ նաև մտաւոր ոյժը կամ խելքը, միթէ ժողովրդին կառավարում էին յիմարներ:

Արդեօք միմիայն տերրորի ու կեղծաւորութեան շնորհիւ են կարողացել ուժեղները և եռանդոտ մարդիկ կառավարել բազմութիւնը (մասային): Իհարկէ ոչ և հի: Տարդն էլ այն կարծիքին է, որ նրանք գլուխ են անցել գլխաւորապէս իրանց գրաւիչ ոյժի ու գաղափարների շնորհիւ: Միթէ դարձեալ գաղափարի ոյժը և ներշնչումը չեն պատճառ, որ հաղարաւոր ու միլլիոնաւոր հետևողներ են ունեցել բուդդահական, քրիստոնէական, մահմէդական և ուրիշ կրօնների վարդապետութիւնները: Նոյնպէս պատմական խոշոր անձնաւորութիւնները՝ օրինակ, Ալեքսանդր Մեծ և Նապոլէօն իրանց գաղափարների ներշնչումով չէ, որ կարողացել են բազմութեանը իրանց հետ կապել և շարժել նրան, ուր ցանկացել են: Մարդկային հանճարը, մարդկային փառքը հրքան անգամ շատ ժողովուրդների ու ազգերի որոշ ժամանակում դիւթել և հիպնոսել է:

Արդեօք չէ՞նք կարող ասել, որ բոլոր նշանաւոր զօրավարներին, մտածողներին, գեղարուեստագէտներին և առհասարակ մասսային կառավարող մարդկանց ինքը բազմութիւնն է կամովին բարձրացրել փառքի պաղուանդանի վրայ: Շատ կարելի է ոմանք այդպէս էլ կ'ասեն. բայց ճշմարիտն այն է, որ կեանքը առիթներ է տուել և գործունէութեան լայն ասպարէզ բացել. այդ առիթներից օգտուել են հանճարաւոր մարդիկ և իրանց գաղափարներով ու գործերով բազմութեան աչքին են ընկել, որը հետևել է նրանց այնպէս, ինչպէս հիպնոսական քնի մէջ ընկածը հետևում է իր հիպնոսողին:

Հանճարների հետ պատահածը չպէտք է համարել միակն ու բացառութիւն: Միևնոյն երևոյթն է պատահում բոլոր քիչ թէ շատ խելացի մարդկանց հետ, որոնք այսպէս թէ այնպէս միևնորից որոշ առաւելութիւն ունենալով՝ հիպնոսողի դեր են

կատարում իրանց շրջավայրի համար: Կեանքը իր առօրեայ փաստերով ցոյց է տալիս, որ ներշնչումը պահում է իր ոյժը մարդկային գործունէութեան բոլոր տեսակներում:

Կրօնի, գիտութեան, քաղաքականութեան, առևտրական գործերում, մարդկային հոգու ամեն տեսակ արտայայտութիւններին մէջ և առհասարակ ամեն տեղ դուք կը տեսնէք, որ մի քանիսի կամ մինչև անգամ մէկի շուրջը կազմուած է անհատների մի ամբողջ խումբ: Նրանք կազմում են եկեղեցի, շկոլա, դասակարգ, կուսակցութիւն և կուում են ղիսուորներին նման, որոնք գտնուած են իրանց զօրավարի ներշնչման ազդեցութեան տակ. անշուշտ զօրավարն էլ միւսներին աւելի լաւ է մարմնացնում իր մէջ որոշ զգացմունքներ, որոշ բարիք ու գաղափար:

Հետևաբար երբ մի որևէ հարցի վերաբերմամբ ասում են՝ մեծամասնութիւնը այս ինչ կարծիքին է, դրանով մատնացոյց են անում այն երևոյթը, որը իսկապէս պէտք է արտայայտուի այսպէս.—Այս ինչ կամ այն ինչ մարդի կարծիքը ներշնչուած է բազմութեանը: Նշանակում է, որ մի որևէ անհատի կարծիքը (այսօր կարող է լինել մի ճառախօս, էգուց լրագրական աշխատակից և այլն) այնքան ուժեղ է եղել, որ ամենից աւելի իր վրայ է հրաւիրել ամբողջ ուշադրութիւնը, քան թէ մի ուրիշ կարծիք:

Տարբը շատ իրաւացի է ասում.—«Ունենալ միայն ներշնչուած գաղափարներ և համարել նրանց ինքնուրոյն ու սեփական, անհ դա պատրանք է, որը յատուկ է լուսնոտին և առհասարակ մարդին, որին համարում ենք հասարակական միութիւն»:

Ուրեմն դառնալով վերևում տուած մեր հարցին՝ կ'ասենք, որ սխալ է կարծել թէ բազմութեան բռնակալութիւնը սահմանափակ խելքով մարդկանց յաղթանակն է. նոյնպէս սրբալ է, իբր թէ ոչ-ինտելիգենտ բազմութիւնն է կառավարում աշխարհը, ընդհակառակը աշխարհը կառավարում են այն փոքրաթիւ ամենահասկացող—ամենաինտելիգենտ մարդիկը, որոնք իրանց յետևից քաշ են տալիս բազմութեանը, նրան ներշնչելով իրանց ցանկութիւններն ու գաղափարները:

Ոմանք կարող են իրաւացի կերպով հակառակել սրան, թէ բազմութիւնը իսկոյն չէ խոնարհուած խելացի, մեծ մարդկանց մտքերի առաջ, լինի դա քաղաքականութեան, գեղարուեստի, գիտութեան մէջ, այդ միւսին է: Այո, հանճարաւոր ու տաղանդաւոր մարդիկ համարեա միշտ իրանց կեանքի ընթացքում մնում են առանձնացած ու անջատուած, որովհետև նրանք

ստիպուած են լինում կռուել նորութիւնների մասին ունեցած հասարակութեան մտավախութեան դէմ, կռուել ամենատաք կերպով: Դա բոլորովին ճիշտ է: Բայց ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ:

Եթէ խնդրի վրայ նայենք աւելի լայն հայեացքով, կը տեսնենք, որ բազմութեան կարծիքը, արդեօք արագ է կազմուում թէ՞ երկար ժամանակուայ ընթացքում, միշտ իր սկիզբն է առնում մէկի կամ միքանիսի կարծիքից: Մենք կը տեսնենք, որ ներշնչումը երբեմն կայծակի արագութեամբ է տարածուում, երբեմն էլ դանդաղ ու կանոնաւոր. այսպէս թէ այնպէս պէտք է համաձայնել, որ մեծամասնութեան ցանկութիւնը երբէք հաւասար չի լինիլ բազմութիւն կազմող անհատների ցանկութիւնների գումարին, այլ աւելի շուտ կը լինի մէկ անհատի ցանկութեան արտացոլացումը և կամ նրա ցանկութեան անգիտակցաբար ընդունելը:

Ապա ուրեմն խմբական հոգեբանութեան տեսակէտից բազմութեան բռնակալութիւնը չէ ներկայացնում բարբարոսների թագաւորութիւն, ինչպէս ոմանք են կարծում:

Ընդհակառակը բազմութեան կարծիքը խելացի, մեծ մարդկանց կարծիքն է, որը դանդաղ թէ արագ կերպով թափանցել է մասսայի մէջ. այսպէս՝ բազմութեան բռնակալութիւնը դառնում է հանճարաւոր մտքերի, հանճարաւոր գաղափարների ընդհակալութիւն, երբ այդ մտքերը արդէն հասունացած են և երբ նրանց գործադրութիւնը դարձել է ժամանակակից:

Պարզ է, որ բազմութեան բռնակալութիւնը վնասակար չէ մարդկային առաջադիմութեան համար: Բայց կասկած չկայ, որ մասսան որքան աւելի կրթուի, բարձրանայ իր մտաւոր ու բարոյական կողմերով, այնքան աւելի գիտակցական կը լինին հանճարաւոր մտքերի ընդունելութիւնն ու գործադրութիւնը և այնքան աւելի բարիքներ կարող են տալ հասարակութեանը:

ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ